
«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ

**Միջանկյալ ֆինանսական
հաշվետվություններ**

**2018թ. հունիսի 30-ին
ավարտված վեց ամիսների համար**

Բովանդակություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն	9
Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ

*Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն
2018թ. հունիսի 30-ին ավարտված վեց ամիսների համար*

	Ծնթց.	Ապրիլի 1, 2018թ. Հունիսի 30, 2018թ. հազ. դրամ	Հունվարի 1, 2018թ. Հունիսի 30, 2018թ. հազ. դրամ	Ապրիլի 1, 2017թ. Հունիսի 30, 2017թ. հազ. դրամ	Հունվարի 1, 2017թ. Հունիսի 30, 2017թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	4	1,591,699	3,101,272	1,295,860	2,492,469
Տոկոսային ծախս	4	(1,036,105)	(2,048,664)	(785,912)	(1,521,299)
Զուտ տոկոսային եկամուտ	4	555,594	1,052,608	509,948	971,170
Միջնորդավճարների գծով եկամուտ		25,953	51,182	24,864	46,321
Միջնորդավճարների գծով ծախս		(16,394)	(31,431)	(15,796)	(26,644)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ		9,559	19,751	9,068	19,677
Զուտ օգուտ արտարժույթային գործառնություններից		19,802	13,403	4,246	12,401
Զուտ օգուտ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներից		282,510	283,497	157,577	261,326
Զուտ այլ գործառնական ծախսեր		(21,858)	(44,216)	(18,587)	(48,515)
Գործառնական եկամուտ		845,607	1,325,043	662,252	1,216,059
Ֆինանսական ակտիվների արժեզրկումից զուտ կորուստներ	5	(111,979)	(112,200)	(14,294)	(83,425)
Անձնակազմի գծով ծախսեր		(153,733)	(315,039)	(165,227)	(287,030)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	6	(127,979)	(229,680)	(134,443)	(222,729)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		451,916	668,124	348,288	622,875
Շահութահարկի գծով փոխհատուցում		29,111	61,158	-	-
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ		481,027	729,282	348,288	622,875
Այլ համապարփակ եկամուտ հաշվետու ժամանակաշրջանի համար՝ առանց շահութահարկի					
<i>Հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների վերագնահատման պահուստ					
Իրական արժեքի զուտ փոփոխություն		(177,255)	144,545	301,530	419,768
Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն		(231,772)	(232,850)	(130,886)	(214,462)
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ հաշվետու ժամանակաշրջանի համար՝ առանց շահութահարկի		(409,027)	(88,305)	170,644	205,306
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ		72,000	640,977	518,932	828,181

6-ից 70-րդ էջերում ներկայացված միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2018թ. հուլիսի 14-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Ստեփանյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Անի Սարգսյան
Ֆինանսների և վարչարարության
վարչության պետ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	Հունիսի 30, 2018թ. հազ. դրամ	Դեկտեմբերի 31, 2017թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	8,248,046	7,408,502
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներ	9	27,123,574	26,078,994
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	10	7,744,471	10,049,975
Բանկերին տրված ամորտիզացված արժեքով չափվող վարկեր և փոխառություններ	11	10,903,046	11,291,962
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով չափվող վարկեր և փոխառություններ	12	34,767,299	28,540,823
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	925,824	952,209
Այլ ակտիվներ	14	1,231,874	797,374
Հետաձգված հարկային ակտիվներ		29,712	-
Ընդամենը ակտիվներ		90,973,846	85,119,839
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերի ավանդներ և մնացորդներ	15	1,276,051	703,902
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	16	50,280,451	45,269,985
Այլ ներգրավված միջոցներ	17	4,483,746	4,857,638
Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից	18	10,360,492	10,554,309
Այլ պարտավորություններ		189,615	195,391
Ընդամենը պարտավորություններ		66,590,355	61,581,225
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	19	23,825,100	23,825,100
Էմիսիոն եկամուտ		257,149	257,149
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների վերագնահատման պահուստ		1,413,346	1,491,396
Կուտակված վնաս		(1,112,104)	(2,035,031)
Ընդամենը սեփական կապիտալ		24,383,491	23,538,614
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		90,973,846	85,119,839

«Բիրյու Բանկ Արմենիա» ՓԲԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին միջամակրայա հաշվետվություն
 2018թ. հունիսի 30-ին ավարտված վեց ամիսների համար

	Հունվարի 1, 2018թ.	Հունվարի 1, 2017թ.
Ծնթգ.	Հունիսի 30, 2018թ. հազ. դրամ	Հունիսի 30, 2017թ. հազ. դրամ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ		
Ստացված տոկոսներ	3,089,168	2,518,054
Վճարված տոկոսներ	(1,592,961)	(1,021,514)
Ստացված միջնորդավճարներ	51,233	46,172
Վճարված միջնորդավճարներ	(31,434)	(26,659)
Չուտ մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներից	283,498	261,324
Չուտ մուտքեր արտարժույթային գործառնություններից	27,333	24,460
Վճարված հարկեր (բացառությամբ շահութահարկի)	(4,745)	(9,488)
Աշխատավարձ և այլ վճարումներ աշխատակիցներին	(269,375)	(233,019)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(193,778)	(178,405)
Այլ վճարումներ	(32,644)	(28,677)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներ	(1,277,593)	(2,399,278)
Հակադարձ հետզմանն պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,316,000	(53,760)
Բանկերին տրված ամորտիզացված արժեքով չափվող վարկեր և փոխառություններ	364,754	(8,438,925)
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով չափվող վարկեր և փոխառություններ	(6,341,941)	(5,647,557)
Այլ ակտիվներ	(433,772)	35,500
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)		
Բանկերի ավանդներ և մնացորդներ	557,871	27,167
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	4,723,949	5,339,499
Այլ ներգրավված միջոցների մարումներ	(356,544)	(135,629)
Այլ պարտավորություններ	(2,307)	1,246
Գործառնական գործունեությունից ստացված / (գործունեությանը օգտագործված) դրամական միջոցների զուտ հոսքեր՝ նախքան շահութահարկի վճարումը	876,712	(9,919,489)
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ	(9,699)	(11,645)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր	(9,699)	(11,645)
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՄՏԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ		
Փոխարկելի վարկ կապակցված կազմակերպությունից	-	3,020,578
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	-	3,020,578
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ / (նվազում) / Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	867,013	(6,910,556)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	(27,547)	6,330
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջում	7,408,502	14,089,137
8	8,247,968	7,184,911

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	23,825,100	257,149	853,545	(3,058,187)	21,877,607
Ընդամենը համապարփակ եկամուտ					
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ	-	-	-	622,875	622,875
Այլ համապարփակ եկամուտ					
<i>Հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	419,768	-	419,768
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	(214,462)	-	(214,462)
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ	-	-	205,306	-	205,306
Մնացորդը 2017թ. Հունիսի 30-ի դրությամբ	23,825,100	257,149	1,058,851	(2,435,312)	22,705,788
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	23,825,100	257,149	1,491,396	(2,035,031)	23,538,614
ՖՀՄՄ 9 անցման ազդեցություն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ			10,255	193,645	203,900
Ընդամենը վերահաշվարկված համապարփակ եկամուտ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	23,825,100	257,149	1,501,651	(1,841,386)	23,742,514
Ընդամենը համապարփակ եկամուտ					
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ	-	-	-	729,282	729,282
Այլ համապարփակ եկամուտ					
<i>Հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի Շահույթ կամ վնաս փոխանցված Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	144,545	-	144,545
Ընդամենը այլ համապարփակ վնաս	-	-	(232,850)	-	(232,850)
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ	-	-	(88,305)	-	(88,305)
Մնացորդը 2018թ. Հունիսի 30-ի դրությամբ	23,825,100	257,149	1,413,346	(1,112,104)	24,383,491

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվությունը պետք է դիտարկվի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ն («Բանկ») հիմնադրվել է 2007թ-ին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անդամ է:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Ամիրյան փ. 18/3: Բանկն ունի երկու մասնաճյուղ:

Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

(բ) Բաժնետերեր

2007թ. օգոստոսին «Բիբլոս Բանկ Էս-Էյ-Էլ»-ը ձեռք բերեց ««ԻԹԲ» Միջազգային Առևտրային Բանկ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը, և Բանկը վերանվանվեց «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի:

2008թ. ընթացքում Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկը և Նավթ Արտահանող Երկրների Կազմակերպության Միջազգային Չարգացման Հիմնադրամը ձեռք բերեցին «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի սովորական բաժնետոմսերի համապատասխանաբար 25%-ը և 10%-ը: 2016թ. հունիսին Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկը և Նավթ Արտահանող Երկրների Կազմակերպության Միջազգային Չարգացման Հիմնադրամը վաճառեցին իրենց բաժնետոմսերը «Բիբլոս Բանկ Էս-Էյ-Էլ»-ին, որի արդյունքում 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Բիբլոս Բանկ Էս-Էյ-Էլ»-ը դարձավ Բանկի 100% բաժնետերը:

Բանկի վերջնական վերահսկող անձն է պրն. Ֆրանսուա Բասիլը:

(գ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ղեկավարության գնահատականը Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՄ») պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթն է ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ էական անորոշ գնահատումների և կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում՝

- վարկերի արժեզրկման գնահատում – ծանոթագրություն 12,
- ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի գնահատում – ծանոթագրություն 25,
- կապակցված կողմից ստացված փոխառությունների և մայր կազմակերպությունից ստացված ստորադաս փոխառությունների ֆորվարդների և օպցիոնների իրական արժեք – ծանոթագրություններ 17 և 18:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Բանկի ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած շահույթը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): ՀՀ ԿԲ-ում պարտադիր պահուստավորման նպատակով դեպոզիտացված միջոցները չեն համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ այդ միջոցների ելքագրումը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ երեք դասերից մեկում

- ամորտիզացված արժեքով չափվող ակտիվներ,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներ,
- շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվի դասակարգումը չափման դասերից որևէ մեկին կախված է ինչպես այդ ֆինանսական ակտիվի կառավարման համար կիրառվող բիզնես մոդելից, այնպես էլ՝ տվյալ ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերից:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, երբ՝

- տվյալ ակտիվը կառավարվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվները համապատասխան պայմանագրերով նախատեսված դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու համար (բիզնես մոդել «պահել հավաքագրման համար») և
- տվյալ ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթների համաձայն՝ որոշակի ամսաթվերին առաջանում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ (միայն մայր գումարի և տոկոսների վճարումների չափանիշ)։

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով միայն այն դեպքում, երբ.

- տվյալ ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով, և
- տվյալ ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները համապատասխանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումների չափանիշին:

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում, բացառությամբ ներքոնշյալների, որոնք ճանաչվում են շահույթ վնասում, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- արդյունավետ տոկոսի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը,
- ակնկալվող վարկային կորուստներն ու հակադարձումները և
- արտարժույթի փոխանակումից օգուտներն ու վնասները

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման պահին նախկինում այլ համապարփակ եկամտում ճանաչված օգուտ / վնասները կապիտալից փոխանցվում են շահույթ/ վնաս:

Բաժնային գործիքներում կատարվող ներդրումները չեն համապատասխանում միայն մայր գումարի և տոկոսների վճարումների չափանիշին, այդ իսկ պատճառով չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այնուամենայնիվ, առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում կատարվող ներդրման սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել այդ ներդրման իրական արժեքի փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Նման որոշումը կարող կայացվել առանձին հիմունքով յուրաքանչյուր գործիքի համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով գործիքներ:

Բանկի կողմից տեղաբաշխված վարկերը դասակարգվում են ամորտիզացված արժեքով չափվող, քանի որ բավարարում են բացառապես մայր գումարի և տոկոսների վճարումների չափանիշին և կառավարվում են համապատասխան բիզնես մոդելի («պահել հավաքագրման համար») շրջանակում:

Պարտքային ֆինանսական գործիքները դասակարգվում են իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, քանի որ վերջիններիս կառավարման բիզնես մոդելը նախատեսում է թե պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրում, և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառք:

Բաժնային գործիքներում ներդրումները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող:

(ii) Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները չափվում են

- ամորտիզացված արժեքով,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող (ԻԱԱՀ չափվող),
- իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող (ԻԱՇՎ չափվող):

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

(iv) Արդյունավետ տոկոսադրույք

Բանկի շահույթ կամ վնասում տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Արդյունավետ տոկոսադրույքը այն տոկոսադրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ժամկետի ընթացքում ակնկալվող ապագա դրամական մուտքերը կամ ելքերը ճշգրտորեն զեղջում է մինչև

- Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կամ
- Ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը

Ֆինանսական գործիքների, բացառությամբ արժեզրկված ֆինանսական ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս բանկը հաշվի է առնում ֆինանսական գործիքի պայմանագրային բոլոր պայմանները, առանց ակնկալվող վարկային կորուստները հաշվի առնելու: Արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք հաշվի առնելով ապագա դրամական հոսքերը ներառյալ ակնկալվող վարկային կորուստները: Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր այն վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում: Գործարքի հետ կապված ծախսումները այն լրացուցիչ ծախսումներն են, որոնք

ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

(v) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ֆինանսական ակտիվների դեպքում ակնկալվող վարկային կորուստի պահուստը (ԱՎԿ) հանած (կամ արժեզրկումից կորուստը 2018 թ. Հունվարի 1-ից առաջ):

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը այդ ակտիվի ամորտիզացված արժեքն է առանց ԱՎԿ պահուստը հաշվի առնելու :

(vi) Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Տոկոսային եկամտի կամ ծախսի հաշվարկման համար կիրառվում է արդյունավետ տոկոսը ակտիվի (եթե ակտիվը արժեզրկված չէ) համախառն հաշվեկշռային արժեքի, կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների տոկոսային եկամուտը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի նկատմամբ: Հետագայում երբ ֆինանսական ակտիվը այլևս արժեզրկված չէ տոկոսային եկամտի հաշվարկը կրկին կատարվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվների տոկոսային եկամուտը հաշվարկվում է ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով ամորտիզացված արժեքի նկատմամբ: Ակտիվի վարկային ռիսկի բարելավման դեպքում տոկոսային եկամտի հաշվարկը չի վերականգնվում համախառն հիմունքով հաշվարկին:

(vii) Ներկայացում

Բանկի շահույթ կամ վնասի և այլ համապարփակ եկամտի հաշվետվությունում ներկայացված տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների տոկոսը՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պարտաքային ֆինանսական գործիքների տոկոսը հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

(viii) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կատարվելու ակտիվի վաճառքից կամ կվճարվելու պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիս բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Բանկը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և ծավալով՝ շարունակական հիմունքով գնալին տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Բանկը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոփոխություններն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

(ix) Ապաճանաչում

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի այն մասնաբաժինը, որը առաջացել կամ պահպանվել է Բանկի կողմից ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են կամ չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Եթե Բանկը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հատուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամկետից շուտ մարման արդյունքում առաջացած օգուտում կամ վնասում:

(x) Հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրեր

Վաճառքի և հետզնման պայմանագրերով («ռեյո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետզնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեյո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետզնման պայմանագրերով («հակադարձ ռեյո») ստացվելիք գումարները գրանցվում են որպես հակադարձ հետզնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում հակադարձ հետզնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(xi) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, տոկոսադրույքների, արտարժույթների փոխարժեքների, թանկարժեք մետաղների, բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցությունը:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը կատարվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Բանկն ածանցյալ գործիքների առքն ու վաճառքն իրականացնում է ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն համապատասխանում հեջի հաշվառման պահանջներին:

(xii) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Բանկն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Բանկն ունի հաշվանցում կատարելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Բանկի ու բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, վերջիններիս լուծարման կամ սնանկացման դեպքում:

(xiii) Ֆինանսական գործիքների արժեզրկում

Բանկը ճանաչում է ԱՎԿ պահուստ հետևյալ ֆինանսական գործիքների համար, որոնք չեն հանդիսանում իրական արժեքով չափվող՝ շահույթ կամ վնասի միջոցով

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- տրամադրված ֆինանսական երաշխիքներ,
- վարկային պարտավորվածություններ

Կապիտալի գործիքների համար ԱՎԿ պահուստ չի ճանաչվում:

ԱՎԿ պահուստները հաշվարկվում են ֆինանսական ակտիվների ամբողջ ժամկետի կտրվածքով, բացառությամբ ներքոնշյալ դեպքերի, երբ պահուստը հաշվարկվում է 12-ամսյա ժամանակահատվածի կտրվածքով.

- Հաշվետու օրվա դրությամբ ցածր վարկային ռիսկ ունեցող պարտքային գործիքներ,
- Այլ ֆինանսական գործիքներ (բացառությամբ լիզինգի գծով ստացվելիք գումարների), որոնց վարկային ռիսկը էական փոփոխության չի ենթարկվել սկզբնական ճանաչման պահից հետո:

(xiv) ԱՎԿ ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

ԱՎԿ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ ներկայացվում են հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ. ԱՎԿ հանվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից;
- վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ. հիմնականում որպես պահուստ;
- երբ ֆինանսական գործիքը պարունակում է և օգտագործված, և չօգտագործված մաս, և բանկը չի կարող տարանջատել վարկային պարտավորվածության գծով հաշվարկված ԱՎԿ գումարը օգտագործված մասի ԱՎԿ գումարից, ապա ներկայացվում է ԱՎԿ ընդհանուր պահուստ երկու բաղադրիչների համար, որը հանվում է ակտիվի օգտագործված մասի համախառն հաշվեկշռային գումարից: Եթե ԱՎԿ ընդհանուր գումարը գերազանցում է օգտագործված մասի համախառն հաշվեկշռային արժեքը ապա գերազանցող մասի չափով ճանաչվում է պահուստ:
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պարտաքային ֆինանսական գործիքներ. ֆինանսական դրության մասին հաշվետվությունում ԱՎԿ պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների հաշվեկշռային արժեքը դրանց իրական արժեքն է: ԱՎԿ գումարը ճանաչվում և բացահայտվում է վերագնահատման պահուստում:

(xv) Դուրսգրումներ

Վարկերն ու պարտքային գործիքները դուրս են գրվում, երբ դրանց գծով մարումը իրատեսական չէ:

(xvi) Վերանայված ակտիվներ

Հնարավորության դեպքում Բանկը փորձում է վերանայել վարկի պայմանները՝ նախընտրելով դա գրավի բռնագանձմանը: Սա կարող է ներառել մարումների ժամկետի երկարաձգումը և նոր պայմանների համաձայնեցումը:

Պայմանների այդպիսի վերանայումը հաշվառվում է հետևյալ կերպ.

- Եթե վարկի արժույթը փոխվել է, ապա հին վարկն ապաճանաչվում է և նոր վարկ է ճանաչվում:
- Եթե վարկի պայմանների վերանայումը պայմանավորված չէ վարկառուի ֆինանսական դժվարություններով, Բանկը կիրառում է նույն մոտեցումը, որն օգտագործում է վարկային պորտֆելի համար:
- Եթե վարկի պայմանների վերանայումը պայմանավորված է վարկառուի ֆինանսական դժվարություններով, և վարկն արժեզրկվում է պայմանների վերանայումից հետո, ապա Բանկը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված նոր դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի և նախքան պայմանների վերանայումը հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը ճանաչում է տվյալ ժամանակաշրջանի արժեզրկման գծով պահուստում: Եթե վարկը չի արժեզրկվում պայմանների վերանայումից հետո, ապա Բանկը վերահաշվարկում է արդյունավետ տոկոսադրույքը:

Պայմանների վերանայումից հետք վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերահսկում է վերանայված պայմաններով վարկերը՝ հավաստիանալու համար, որ բոլոր չափանիշներն պահպանված են, և որ ապագա

վճարումները, ամենայն հավանականությամբ, կիրականացվեն: Վարկերը շարունակում են լինել անհատական կամ հավաքական արժեզրկման գնահատման առարկա՝ կիրառելով վարկի սկզբնական կամ ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Մեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման պատրաստ լինելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

– շենքեր	50 տարի
– համակարգիչներ և կապի սարքավորումներ	1-5 տարի
– գույք	5-10 տարի
– փոխադրամիջոցներ	5 տարի

Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Բանկի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ձեռք բերված համակարգչային ծրագրերի լիցենզիաները կապիտալացվում են առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսերի հիման վրա:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 1-ից 10 տարի:

(ե) Բռնագանձված ակտիվներ

Բանկը ճանաչում է բռնագանձված ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն ունի մարման ամբողջական և վերջնական իրավունքներ գրավի նկատմամբ:

Բռնագանձված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից նվազագույնով՝ հանած վաճառքի կազմակերպման ծախսերը: Սկզբնական ճանաչման պահին բռնագանձված ակտիվները չափվում են չաշխատող վարկի հաշվեկշռային արժեքով՝ ներառյալ գրավի բռնագանձման հետ կապված ծախսումները: Իրական արժեքի և վաճառքի

կազմակերպման ծախսերի տարբերությունը հանդիսանում է գրավի գնահատված վաճառքի գինը բնականոն գործունեության ընթացքում՝ հանած վաճառքի հարակից ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվները վերանայվում են որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու տեսանկյունից և համապատասխանաբար վերադասակարգվում են այդ դասի չափանիշները բավարարելու դեպքում:

Բռնագանձված ակտիվները ներառվում են այլ ակտիվներում:

Բռնագանձված ակտիվների օտարումից ստացվող օգուտը և վնասը ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ գործառնական եկամուտ» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(գ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից հանած վաճառքի ծախսերը և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ե) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով գեղջման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, կիրառելիության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(ը) Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխավորությունները:

Ֆինանսական երաշխավորություններն ու իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխավորության սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխավորության գծով կորուստների պահուստը:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկային պարտավորվածություններ, որոնք Բանկը նախատեսում է որպես ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- եթե Բանկն ունի իր վարկային պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

(թ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ հարկումից հետո:

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող ցանկացած գումար ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(ժ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հողվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Բանկն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը զանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Բանկը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

(ի) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, միջնորդավճարների գծով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով կատարած վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժան մաս վարձակալության ժամկետի ընթացքում:

(լ) Վարձակալություն

(i) Գործառնական վարձակալություն՝ Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ

Ակտիվի վարձակալությունը, որի դեպքում սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

(խ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացվող նոր ստանդարտները, այդ ստանդարտների փոփոխությունները և մեկնաբանությունները չէին գործում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Բանկը մտադիր է կիրառել նշված ստանդարտները և փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և դրանց մեկնաբանություններն ըստ ակնկալիքների էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՄ-ների տարեկան կատարելագործումներ, 2014-2016թթ. ժամանակաշրջան – ՖՀՄՄ 1-ի և ՀՀՄՄ 28-ի փոփոխություններ*
- *ՖՀՄՄ 16 «Վարձակալություն»*
- *ՖՀՄՄ 15 «Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերի գծով»*
- *Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների դասակարգում և չափում (ՖՀՄՄ 2-ի փոփոխություններ)*
- *Ներդրումային գույքի փոխանցում (ՀՀՄՄ 40-ի փոփոխություններ)*
- *Ակտիվների վաճառք կամ ներդրում ներդրողի և նրա կապակցված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև գործարքում (ՖՀՄՄ 10-ի և ՀՀՄՄ 28-ի փոփոխություններ)*
- *ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարային հատուցումներ»*
- *ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 23 «Շահութահարկի հաշվառման հետ կապված անորոշություն»*

(ծ) Հաշվապահական քաղաքականության փոփոխություն

Բանկը ընդունել է ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» նոր ստանդարտը, որը կիրառելի է 2018թ. Հունվարի 1-ից: ՖՀՄՍ 9 նախատեսում է հիմնավոր փոփոխություններ ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ: Ծանաչումը և չափումը» ստանդարտի համեմատ:

ՖՀՄՍ 9 անցման արդյունքում բանկի հաշվապահական քաղաքականության հիմնական փոփոխությունները ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ 9 նախատեսում է ֆինանսական ակտիվների դասակարգման հիմնական երեք խմբեր. ամորտիզացված արժեքով չափվող ակտիվներ, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներ, շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ: Նոր ստանդարտում հանվել են ՀՀՄՍ 39-ի մինչև մարման ժամկետը պահվող, վարկեր և դեբիտորական պարտքեր և վաճառքի համար մատչելի դասակարգումները:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը ՖՀՄՍ 9-ում հիմնականում նույնն է ինչ ՀՀՄՍ 39-ում:

ՀՀՄՍ 39-ի համաձայն կրած վարկային կորուստների մոդելը ըստ ՖՀՄՍ 9-ի վերանայվել է ակնկալվող վարկային կորուստների մոդելի: Այսինքն նոր ստանդարտի համաձայն վարկային կորուստները ճանաչվում են ավելի վաղ, քան նախկինում:

ՖՀՄՍ 9 անցման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության արդյունքները ճանաչվել են հետադարձ, բացառությամբ հետևյալի.

Համեմատական ժամանակաշրջանները չեն վերանայվել: ՖՀՄՍ 9 անցման արդյունքում ֆինանսական գործիքների հաշվեկշռային գումարների փոփոխությունները ճանաչվել են նախորդ ժամանակաշրջանների կուտակված օգուտ/ վնասներում և պահուստներում: Համապատասխանաբար 2018թ. հունիսի 30-ին ավարտված 6 ամիսների համար և 2017թ. դեկտեմբերի դրությամբ ներկայացված տեղեկատվությունը համադրելի չէ 2018թ. հունիսի 30-ի և համապատասխան 6 ամիսների տեղեկատվության հետ:

ՖՀՄՍ 9-ի անցման մանրամասն տեղեկատվությունը ներկայացվում է ստորև:

ա. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգում ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման պահին

Ստորև ներկայացվում են 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման նախկին կատեգորիաները ՀՀՄՍ39-ի համաձայն և նոր դասակարգումը ՖՀՄՍ9-ի համաձայն.

Ֆինանսական ակտիվներ 01 հունվար 2018թ. դրությամբ	Նախկին դասակարգում ըստ ՀՀՄՍ 39	Նոր դասակարգում ըստ ՖՀՄՍ 9	Հաշվեկշռային ն արժեք ըստ ՀՀՄՍ 39	հազ.դրամ Նոր Հաշվեկշռային արժեք ըստ ՖՀՄՍ 9
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացվող արժեքով չափվող	7,408,502	7,408,399
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ	Վաճառքի համար մատչելի	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող	26,065,834	26,053,015

«Բիրտու Բանկ Արմենիա» ՓԲԸ
 2018թ. հունիսի 30-ին ավարտված վեց ամիսների միջանկյալ
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կապիտալի գործիքներ	Վաճառքի համար մատչելի	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող	13,160	13,160
Հակադարձ հետզմման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Անորտիզացվող արժեքով չափվող	10,049,975	10,049,975
Բանկերին տրված անորտիզացված արժեքով չափվող վարկեր և փոխառություններ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Անորտիզացվող արժեքով չափվող	11,291,962	11,291,747
Հաճախորդներին տրված անորտիզացված արժեքով չափվող վարկեր և փոխառություններ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Անորտիզացվող արժեքով չափվող	28,540,823	28,798,526
Ընամենը ֆինանսական ակտիվներ			83,370,256	83,614,822
Բանկերի ավանդներ և մնացորդներ	Անորտիզացվող արժեքով չափվող	Անորտիզացվող արժեքով չափվող	703,902	703,902
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	Անորտիզացվող արժեքով չափվող	Անորտիզացվող արժեքով չափվող	45,269,985	45,269,985
